Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
24.11.2016թ. թիվ 468-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Արագածոտնի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2 24.11.2016թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2016 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) դահլիճում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) Արագածոտնի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Արագածոտնի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ Ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2016 թվականի դեկտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:**
2. Յուրաքանչյուր մարզի համար մարզային համակարգողի **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի նոյեմբերի 24-ից և ավարտվում է 2016 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 18:00-ին:**
3. Քարոզչությունը սկսվում է **2016 թվականի դեկտեմբերի 8-ից (ներառյալ) և ավարտվում է 2016 թվականի դեկտեմբերի 12-ին:**
4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար